

891.99

9-76

ԿԱՆԻՓՍԷ ԵՒ ՏԵԼԵՍԱՔ

ԹԱՏՐԵՐԳՈՒԹԻՒՆ

ՅՕՐԻՆԵԱՑ

ՄԿՐՏԻՉ ՅՈՎԷԱՆՆԷՍ ՉՕՐԱԲԵԱՆ

Ի ԲԹԱԻԲԱ



ՎԵՆԵՏԻԿ Ս. ՂԱԶԱՐ

1907

891.99

9-76

Երեւան

ՀՀ

Հասցեատիր Հարսե և Վրեճյան
Մարտի և Ապրիլի 2. և 3. Հարսե

Մ. Ջ. Զորբ

To dear Balasam 21 NOV 2011

1945

ՎԱԼԻՓՍԷ ԵՐ ՏԵԼԵՍԱՔ

ԹԱՏՐԵՐԳՈՒԹԻՒՆ

891.99

ՅՕՐԻՆԵԱՑ

2-76

ՄԵՐՏԻՉ ՅՈՎԱԶԱՆԼԵՍ ՉՕՐԱԲԵԱՆ

Ի ԲԹԱԻԻԱ

ՕՐԿԱՆԻՅԱԿԻ ԾՈՒՅԱԿԻ
ԿԵՆ ԶԱՐԴԱՆԵՑ



ՎԵՆԵՏԻԿ Ս. ՂԱԶԱՐ

1907

13.04.2013

29707

ՆՈՒԷՐ ԱՐԳԱԴԻՐ

Ա Ռ

ԲԱՐԵԳՈՒԹ ՀԱՅՐ ԻՄ, ՅՈՎՀԱՏՆԷՍ Մ. ԶՕՐԱԲԵԱՏ


Զերկս զայս գրաւոր ի հօրս ձօնեմ յիշատակ,
 Որ ըզգրոց վըսեմ բարբառն ներդաշնակ
 Ուտոյցն իմձ, ի նոր Զուղա, յեսպահամ:
 Եւ հոգ տարեալ՝ քաղցր զթով հայրական,
 զՔրիստոսեան սրբոյ կրօնի սկզբունս
 Յիս ներշնչեաց, և զայլ ազնիւ ըզխոկմունս:
 Եւ ի տիս իմ երիցս հիմզ առեալ զիս՝
 Ած հոյակապն ի Կալկաթա, ուր Գամգէս
 Ուղխինաճեմ խաղայ զմայ. և թափի
 Ի հնդկականն Ովկիանոս պանծալի:
 Անդ լաւ տիկին իշխան Մանուկ Զօրաբեան
 Զիս ընկալաւ, և խմամ յիւրում տարաւ տամ:



2969-15

Եւ ընդ երկց իւրոց որդւոց սիրելեաց՝
 Յանգլիական ուսումնարան առաքեաց,
 Ուր և ուսայ չքմաղ զլեզուն Բրիտանեան,
 Որ զիտուլթեանց և արհեստից գամծարան.
 Որ ի կեանս իմ միշտ ինծ եղեւն պիտանի-
 Եւ ի յապայս ամտարակոյս դեռ լիցի:

Մ. Յ. ԶՕՐԱՅԵԱՆ



Ա Ն Ձ Ի Ն Ք

- ԿԱԼԻՓՍԷ . . Դիցուհի և Յաւերժհարսն Ողիգեայ Կըղ-
 զւոյն
 ՏԵԼԵՄԱՔ . . Որդի Ողիսեայ
 ՄԵՆՏՈՐ . . Բարեկամ Ողիսեայ, և առաջնորդ Տելե-
 մարայ
 ԱԹԵՆԱՍ . . Զաստուածուհի իմաստութեան
 ԵԻՔԱՐԻՍ . . Յաւերժահարսն և նաժիշտ Կալիփսեայ

ՊԱՐԳ ՅԱԻԵՐԺԷԱՐՍԱՆՅ

ԿԱԼԻՓՍԷ ԵՒ ՏԵԼԵՄԱՔ

ԹՍՏՐԵՐԳՈՒԹԻՒՆ

Տ Ե Ս Ի Լ Ա Ռ Ա Ջ Ի Ն

Կալիփսէ է քարայրի իւրում ձեռն ի ծնօտի այսպէս
աւարէ:

Ո՛հ, որպիսի փոփոխումն.
Երանաւետ աւուրք կենաց իմ անցին,
Վիշաք և աղէտք փոխան նոցին ինձ հասին:
Զի որդիս ևս իմս տարփալին մեկնեցաւ.
Գնաց աստի, և նա անդարձ հեռացաւ,
Եւ զիս ի խոր եթող ի սուգ անըսփոփ:
Եւ ես անմահ գոլով, ո՛հ,
Անմահ մնացեն աղէտք իմ.
Եւ վայրօրս այսք, որ երբեմն
Յիս ազդէին քաղցր բերկրանս,
Եւ զուարճանս անպատումս,
Այլ այժմ աւա՛ղ վիշտս խորինս
Ածեն յիմ սիրտ դիւրազգաց
Զի ինձ յաճախ յուշ ածեն
Քաղցր յիշատակ Ողիսեայ:
Զի ես ըզնա սիրէի.

2769-25

Եւ ընդ նրմա շրջէի՝
 Ընդ դաշտորայս ծաղկագարդս,
 Եւ զգայի քաղցր բերկրանս.
 Այլ այժմ նորին հակառակն է ամենայն:
 Տըրտում է սիրտս մեծապէս.
 Եւ ո՞ զիմ վիշտս փարատեսցէ ի սրտէս.
 Ո՞ մըխիթար ինձ լիցի: —
 Է՛հ Ողիտես Ողիտես,
 Իմս տարփալի Ողիտես,
 Ձիհորդ այդպէս զիս թողեր,
 Ձիհորդ յանկարծ զիս լքեր,
 Եւ հեռացար դու անդարձ: —
 Ով դիք համայն և զիցանոյշք վերնածեմք,
 Ձիմըս տեսէք դառն աղէտս,
 Եւ դատ արդար արարէք,
 Ընդ իս ընդ հէքս և ընդ վատըն Ողիտես,
 Եւ ըստ նորին յանցանաց՝
 Եւ տըմարդի դըժբանաց՝
 Գուք այժմ ըզնա պատժեցէք.
 Չնա արարէք ծովասոյզ.
 Չի մի բընաւ կարող լիցի նա դառնալ
 Յիւրն թշուառ և հիքազոյն հայրենիս,
 Եւ զիւրն զըրգել զամուսին՝
 ՉՊենելոպէ կաթոզին.
 Չի նա դժբեաց զիւր սուրբ խոստումն և գնաց,
 Եւ զիս էարկ յանմըխիթար սաստիկ սուգ,
 Եւ ի թախիծ, և ի կսկիծս անվախճանս:

Տ Ե Ս Ի Լ Ե Բ Կ Բ Ո Ր Դ

Մենչդեռ կալիփսէ այսպէս միայնակ աւազէր զիւր դառն
 վիճակ. և Եւրարիս՝ մի ի յաւերժհարսանց անտի, մտեալ առ
 կալիփսէ սակ խնդութեամբ.

Ե Լ Կ Բ Ո Ր Ի Ս

Ո՞ կալիփսէ կալիփսէ,

Մերս մեծափառ զիցուհի.
 Ես աստըստին նըշմարեմ
 Ընդ ծովեզըր մեր կզզւոյս
 Ձերկուս նորեկ ազնիւ հիւրս.
 Մինն պատանի յոյժ գեղանի և կայտառ,
 Միւսն ալևոր պատկառելի և ըզգօն.
 Պատանին այն գեղանի՝
 Նըման իսկ է Ողիտեայ.
 Եւ հրաշագան է գեղ զիմացն և անձին.
 Գուցէ որդին է նորին,
 Չոր Գիք զթածք յղեալ են
 Առ վշտակիր զիցուհիդ՝
 Ի մեծ սփոփանս դառն սրտիդ: —

Կալիփոսէ՛ որ Թախճագին Նստեալն էր յիւրում քարայրին,
ձեռն ի ծնօտին, ելանէ անտի, և հայելով ընդ ծովեզրն՝
նշմարէ անդ զերկուս հիւրս, որպէս Եւքարիս պատմէրն.

ԿԱԼԻՓՍԷ

Է՛հ Եւքարիս Եւքարիս,
Ճշմարիտ են նշմարանքդ.
Պատանին այն գեղազան՝
Նրման իսկ է Ոգիտեայ.
Գուցէ նորին է որդի,
Որ ըստ դիպաց յայտ կողի
Անկեալ է նա նաւաբեկ.
Որպէս անկաւն Հայր Նորին.
Այլ թէ ո՞ այն ծերն իցէ
Ոչ կարեմ ես իմանալ,
Արի դու այժմ և գնա,
Իմս սիրելի Եւքարիս,
Առ ծովեզրն կղզւոյս մեր,
Եւ ըզնոսա ողջունեալ
Աստ յարգանօք հրաւիրեա՛:

Եւքարիս ելեալ ի ծովեզրն, հրաւիրէ զերկուս հիւրս: Մենս
տոր և Տեւեմաք զնան ի միասին ի դունն քարայրին Կա-
լիփոսեայ և նա խնդագին ընդյառաջեալ՝ հրաւիրէ յարգա-
նօք ի քարայրն իւր, որ զարդարեալ էր ծաղկամբք, և շքե-
ղապատեալ ի յաւերժհարսանց:

ԿԱԼԻՓՍԷ

Ո՞ դու իցես պատանեակ.
Եւ ի՞բր իշխես գալ ի կղզիս,
Ուր չէ ներեալ մահկանացուի՛
Մերձիկ և գալ և մտանել
Յայտ մեր կըղզի երանութեան.
Զի անմահից է մի միան
Ներելի գալ աստ բընակիլ:

ՏԵԼԵՄՍԻ

Մահկանացու և թէ անմահ՝
Ոք իցես դու ո՞ դիցուհիդ՝
Անկարեկիր ինձ ոչ լիցիս.
Յորժամ լուիցես զիմ ծանր աղէտս
Եւ զիմ արկածս դառնագինս:

ԿԱԼԻՓՍԷ

Ո՛ պատանիդ վշտակիր,
Յառաջ մատիր աներկիւղ,
Աղէ ասո՛ քոյդ գանուն.
Եւ ընդ նրմին հօրըն քո.
Զաղէտդ պատմեա մի առ մի.
Զի թէ իցես արժանի,

Ես ապաւէն քեզ եղէց .
Եւ երջանիկս արարից
Յայսմ մեր կղզւոջ անմահից : —

ՏԵԼԵՄՔԻ

Անուն իմ է Տելեմաք .

Եւ հօրն իմոյ Ոդիսևս ,
Մի յարքայից թրակեայ .
Նա ետ ահեղ գոռ մարտին
Ընդ ոստանին Տրոպազայ ,
Ելեալ է նա մեր թրակէ ի կղզւոյն .
Եւ այժմ երկիցս հինգ զարոււք են անցեալ ,
Յորմէ հետէ չէ նա դեռ դարձ արարեալ
Յիւր սիրելի հայրենիսն .
Պենելոպէ Մայր իմ հէք՝
Մընայ նըմա անձկանօք .
Եւ ես՝ նորին որդին , ս՛հ ,
Ծովէ ի ծով բազմածուփ
Եւ ընդ ցամաքս դժուարինս՝
Գամ ի խնդիր Հօրն իմոյ ,
Չոր ի սրտէ սիրեմ ես .
Եւ փափագիմ վերստին
Բզհէք ըզհայրս գրտանել .
Եւ գնա ածել առ մայր իմ .
Ո՛վ դիցուհիդ դու անմահ
Եւ հիւրընկալդ բարեսիրտ ,
Եթէ գիտես , ասա ինձ .
Ո՛ւր է հայր իմ տառապեալ :
Է՞նա արդեօք կենդանի
Թէ է մեռեալ ծովասոյց : —

Կալիփոսէ լսելով զանցս զայս , խնայց յոյժ , զի Տելեմաք
է որդի Ոդիսևայ . զարմացաւ ընդ որդիական սէր նորին . և
նա ձենն ի ծնօտի , խորհի վայրիկ մի , և յետոյ ուրեմն պա-
աստանի աննէ նմա այսպէս .

ԿԱԼԻՓՍԷ

Ո՛ պատանիդ հայրասէր ,

Ընդ քոյդ աղէտս դառնագինս
Եմ կարեկիր ի սրտէս .
Եւ ըստ ըղձիցդ՝ պատմեցից
Չանցս Ոդիսեայ հօրըն քո .
Այլ վէպդ այդ է երկայն ,
Եւ ժամ է արդ հանգչելոյ ,
Չի է գիշեր այժմ խորին ,
Մ՛ուտ դու հանգիր , ո՛ պատանիդ վշտակիր՝
Ի սենեակս այս քեզ պատրաստեալ յեւքարեայ ,
Որ սենեկիս իմ է կից .
Դու անդ ննջեա անխոռով ,
Մինչև Արփին մեզ վերստին ի յերկնուտ՝
Չիւրն ծագեսցէ լոյս քաղցրիկ .
Եւ ի քնոյ քո հեշտալի զարթուցեալ՝
Յայնժամ ընդ իս մեղմիկ ի ձեմս շըրջելով ,
Չերանութեան ըզճաշակ
Դու աստ աոցես բազմաշան .
Եւ քոյդ աղէտք դառնագինք
Ի մոռացօնս վաղ անկցին .
Յայնժամ ի դէպս պատշաճագոյնս պատմեցից
Չանցս հօրըն քո հիքազոյն :

ՏԵԼԵՄԱՔ

Ո՛ր դիցունհիդ բազմագութ
 Զնորհակալիս իմ անկեղծս,
 Քեզ նուիրեմ ի սրտէս.
 Զի դու սիրով և գըթով՝
 Զիս զտառապեալս ընկալար
 Եւ զալեոր զուղեկիցս.
 Եւ ըսփոփես զսիրտ իմ,
 Եւ զանցս կամիս պատմել հօրս,
 Որ ցանկալի է սրտիս: —

Ըստ պատուիրանի Կալիփսեայ, Եւքարիս՝ մի ի յաւերժ-
 հարսանց՝ մտանէ ի սենեակ՝ պատրաստեալ վասն Տելեմա-
 քայ. և մատուցանէ նմա պատմուճանս զեղեցիկս և ոսկե-
 հիւսս, և խունկս անդ բուրջ անաշարոյրս, և ելանէ անտի:

ԵԻՔԱՐԻՍ

Ազնիւ զաւակդ Ողիսեան,
 Զայս ոսկեհուռ պատմուճանս՝
 Քեզ պարգևէ Կալիփսէ,
 Կիցունհին մեր բարեգութ՝
 Իւրոյ սիրոյ ի նշան,
 Եւ գթութեան իւր ի ցոյց: —

ՏԵԼԵՄԱՔ

Պարգևըս զայս զեղեցիկս
 Յօժարակամս ընկալնուս,
 Եւ շնորհապարտ եմ ես յոյժ,
 Վե՛ն դիցունհոյն Կալիփսեայ: —

ԵԻՔԱՐԻՍ

Շնորհակալեաց քոյդ ըզբան
 Կիցունհոյն մեր մատուցից:

Մտանէ Մենտոր իմաստուն առաջնորդն Տելեմաքայ ի
 սենեակ նորին, և խօսի ընդ նմա այսպէս.

ՄԵՆՏՈՐ

Ո՛ր Տելեմաք,
 Պատմուճանքս այսք ոսկեհուսք՝
 Զորս Կալիփսէ քեզ ընծայէ պատրանօք,
 Պարտեն ուրեմն զըտանել
 Զանփորձ ըզսիրտ Ողիսական զաւակիդ,
 Եւ զառածել ի գրգանս,
 Եւ ի շաւիղս մոլեկանս.
 Զգոյշ դու լէ՛ր Տելեմաք,
 Կու պատանեա՛հ դեռ անփորձ՝
 Մի՛ պատրիցիս պարգևաւս,
 Եւ մի՛ անկցիս յորոգայթս
 Քեզ պատրաստեալ ի նմանէ.
 Զգոյշ լեր դու Տելեմաք,
 Զհայրենիդ վե՛ն համբաւ
 Եւ ըզպատիւ զերապանձ
 Բընաւ երբէք չաղարտել.
 Քեզ յայտ լիցի, զի պատանի,
 Որ գարդարի կանացաբար,
 Եւ զհետ լինի սընտուեաց,
 Զէ՛ նա չէ բնաւ արժանի

Պատուոյ, շքոյ, իմաստութեան և փառաց։
 Սիրտ՝ որ վշտաց ժուժկալէ
 Եւ ըզգրգանս անգոսնէ,
 Նմա իսկ են արժանի
 Փառք և պատիւ և յարգանք
 Եւ մեծութիւն գերաշուք։²⁰

ՏԵԼԵՄԱՔ

Օ՛ն և օն

Ինձ արասցեն դէք հայրենիք վերնաճեմք
 Եթէ աղարս արարից
 Զհայրենի շքեղ համբաւ և զպատիւ գերաշուք,
 Եթէ թոյլ տաց զրգանաց
 Եւ մոլութեանց սընտուեաց
 Եւ կանացի մեղկութեանց, (նիս.
 Զիմս աղարտել և եղծանել զվարս զբարս հայրեւ
 Մի լիցի ինձ մի բնաւ
 Ի վատ պարտիլ հրապուրանաց դիցունւոյս.
 Զդիս իմոց հայրենեաց,
 Եւ զդիցանոյշս շնորհափայլս
 Ես մաղթանօք կոչեցից
 Ի յօգնութիւն ինձ հիքոյս.
 Եւ ի նոսին ապաստան
 Եղէց ես միշտ զօրութիւնս
 Եւ ի գթութիւնըս նոցին.
 Եւ նորա յիս գթալով,
 Զիս փրկեցեն յարածամ
 Ի վտանգաց, ի փորձանաց բազմադէմ
 Եւ զիղձս լըցցեն իմ սրտի,
 Որ է բարի և ըզձալի հայրենեացս։

2769-28

ՄԵՆՏՈՐ

Խնդամ ես յոյժ Տելեմաք

Ընդ քոյդ հաւատ և ընդ սուրբ սէր և ընդ յոյս,
 Ես գրեզ օրհնեմ սրտագին։
 Եւ խրախուսեմ ի մեծ գործս.
 Հաշտեն ընդ քեզ դէք վերինք.
 Եւ վաղ ընդ փոյթ լցուցեն
 Զքոյ բաղձանս բարետենչս։ —

ՏԵԼԵՄԱՔ

Շնորհս ունիմ քեզ, Մենտոր,
 Իմս առաջնորդ գերհանձար.
 Վասն օրհնութեանդ սրտագեղ՝
 Եւ մաղթանացը բարեաց։ —

Տ Ե Ս Ի Լ Ե Ր Ր Ո Ր Դ

Կալիփոսէ գարթեալ ի քնոյ ընդ այգն, Մենտոր և Տելեմաք հրաւիրեցան առ Կալիփոսէ, որ մնայրն նոցա անձկանօք, Յաւերժհարսունըն չընադադէմք սպիտակագգեստը զեղահելւ սակը անդէն պատրաստեցին ճաշս ակորժահամս, վասն հելւ ռոցն երկոցունց, Կալիփոսէ բազմեցաւ ի գահ իւր զեղեցկակերս և ծաղկազարդ, և շուրջ գնովաւ կանգնեցան զեղադիստակ Յաւերժհարսունըն։ —

ՏԵԼԵՄԱՔ

Լոյս բարի քեզ, ո՞ դիցունէք վեհաշուք



ԿԱԼԻՓՍԷ

Նոյնպէս և Քեզ ո՛ր Տելեմար ետ տենչամ,
Ազնիւ որդիդ Ողիտեայ:

ՏԵԼԵՄԱՐ

Շնորհ ունիմ Քեզ մեծ դշխոյ հիւրասէր:

ԿԱԼԻՓՍԷ

Ի գիշերի անցելում
Հանգիտ խաղաղ ննջեցիր դու Տելեմար:

ՏԵԼԵՄԱՐ

Կարի հանգիտ և խաղաղ,

ԿԱԼԻՓՍԷ

Ուրախ եմ ետ ընդ այդ ոյժ,
Եւ ցանկամ Քեզ միշտ զնոյն.
Հաճեաց ճաշել, Տելեմար,
Եւ դու ազնիւ ծերունի:

Յորժամ սկսան ճաշել, Մենտոր և Տելեմար ընդ Կալիփ-
սեայ- Յաւերժհարսունքն չքնադագեղը սար առեալ էին գաթո-
սովն Կալիփոսայ: Կալիփոն հրամայեաց միում ի Յաւերժ-
հարսանցն հարկանել զոսկի ընարն, և միւսոյն դաշնակա-
ւորս երգել ի միասին. և այս էր երգն՝ զոր նուագէին ի
լուր Տելեմարայ և Մենտորի:

Ե Ր Գ

1

Հելլենք Ազգէն քաջ և Արեւեայ,
Որք մարտ եղին ընդ Տրովադայ.
Զի վասն Պարիս որդին Պրիամայ
Կերփեաց չքնաղ ըզՀեղինէ: —

2

Հելէն, Տիկիինն Մենելաւիայ,
Հէգ և թշուառ արքային Սպարտայ.
Գրգիւ այդպէս ետ նա Յունաց
Սկիզբն առնել զոռ գուպարաց: —

3

Մարտըն ահեղ ամս տեկցին
Երկիցըս հինգ, և սաստկագին
Կոտորածոց և աւերակաց
Առիթ եղև երկուց ազգաց: —

4

Յերկուց կողմանց անպարտելի
Մարտըն մընաց յոյժ սոսկալի.
Քաջն Աքիլևս ճետն Պելոսեան
Սպան զՀեկտոր զիւր ախոյան: —

5

Այլ ոչ այսպէս մարտն վերջացաւ,
 Այլ առաւել ևս սաստկացաւ.
 Եւ դիւցազունք անկան: բազումք,
 Եւ զօրականք ոչ նուագունք: —

6

Մինչ հընարիւրքն վեհ Ողբօտայ՝
 Խորագիտին այն գերակայ՝
 Պայծառ պսակն ըղյաղթութեան՝
 Քաջ և արի Հելլենք տարան: —

7

Եւ Տրովադա՝ ի հուր անեղ
 Յաճիւն դարձաւ քաղաքն շքեղ.
 Եւ Ենէաս առեալ զիւր կին,
 Չհայրն, զորդին, փախեաւ լոին:

8

Դադար յայնժամ եղև մարտին,
 Եւ Ողբօտևս հէք՝ այլ արին
 Ընդ ծով ցամաք անց ընդ երկիր
 Եւ նան բեկեալ յայս վայր անկաւ: —

Յորժամ Տելեմաք՝ զանուն Հօր իւրոյ, զարկածս և զքա-
 շուքիւնս նորին լուաւ, տրամեցաւ յոյժ, և ձեռն ի ծնօտի,
 Լայր դառնագին և չկարէր ճաշակել ի խորին տրամութենէ:
 Կալիփոէ զգալով, զժախիծ և զվիշտ Տելեմաքայ, անդհն
 նշան արար Յաւէրժհարսանցն՝ դադար առնուլ ի յերգելոյն
 և ի հարկանելոյն զքնարն. Կալիփոէ սփոփելով՝ ասաց Տե-
 լեմաքայ . . . —

ԿԱԼԻՍԷ

Մի՛ լար մի՛ լար, Տելեմաք

Ազնիւ որդիդ Ողբօտայ.
 Քեզ գթացցեն դիք վերինք.
 Եւ ես գթամ ընդ նոսին.
 Քեզ երջանիկ արարից,
 Եւ մխիթար պահեցից,
 Եթէ և դու, Տելեմաք,
 Քաջ գիտացցես, այժմէն իսկ
 Յիմ սէր քաղցրիկ վայելել:
 Երջանկութեան է վայրս այս,
 Եւ երջանիկ դու լիցիս.
 Եթէ դու աստ մընացես.
 Յերանելեաց յայտ կղզոջ:

ՏԵԼԵՄԱՔ

Եւ կարիցէ լաւ սրտի
 Ասա դու ինձ դիցունհի.
 Չիւրն մոռանալ ըզճնողս.
 Յետ Աստուածոց ի յերկինս՝
 Վեհ են ծնողք յաշխարհիս.

Եւ չիք քաղցրիկ և սիրուն
Քան ըզծնողս բարեխաւս: —

ԿԱԼԻՓՍԷ:

Է՛ն Տելեմար Տելեմար,
Ա՛յդչափ սիրես ըզծնողսդ
Ա՛յդչափ յարգես ըզնոսին.
Ա՛յդչափ ըղձասդ վերստին
Դու ըզնոսա տեսանել:

ՏԵԼԵՄԱՐ

Այո՛ սիրեմ և յարգեմ
Զիմքս ծնողս բարեխաւս,
Եւ սիրեցից ցյաւիտեն.
Զի Աստուածք վեհք սրբազանք
Եւ սուրբ օրէնք բնութեան
Զայդ պատուիրեն առնել միշտ:

ԿԱԼԻՓՍԷ:

Դու հանճարեղս բարբառիս,
Ո՛րդիսեան լաւ գաւակ.
Ի քոյդ գմայլիմ յաշխուժ բանս:
Ուստի ըզձամ ի սրտէս
Զի դու յաւէժ մնասցես աստ
Յայսմ մեր կղզուջ գեղազարդ:

ՏԵԼԵՄԱՐ

Եթէ հնար գոյր, Գիցունհիդ,
Միշտ հանապազ մընայի.
Ի քոյդ ըղձից ի լրումն.
Այլ սէր ծնողացս չտայ թոյլ:

ԿԱԼԻՓՍԷ:

Զիք անհնար ինչ յաշխարհիս.
Եթէ մարդկան իցեն կամք.
Այլ այժմ լիառատ դու գործեա՛
Ըզտրտմութիւնդ ի մտացդ.
Եւ առ զբաժակս լի գինեաւ
Որ ըմպելին է վեհ դից.
Եւ դիւցազանց անմահից: —

Զգէ զձեռս իւր Տելեմար, և առնու զբաժակն, որ լի էր
նեկաբաւ, ըմպեաց նա և զուաթացաւ, և անդէն ճաշեաց.
և Կալիփսէ՛ յեա ճաշելոյն եհարց ցՄենտոր այսպէս:

ԿԱԼԻՓՍԷ:

Յանկալի է ինձ, ծերունիդ
Իմս պատուելի ազնիւ հիւր,
Զքոյդ անուն իմանալ
Եւ զվայր քոյոյ ծննդեան:

ՄԵՆՏՈՐ

Իմս անուն է Մենտոր
Եւ բնագաւառ Իթակէ:

ԿԱԼԻՓՍԷ:

Հայրենակից ուրեմն ես դու Ողիտեայ:

ՄԵՆՏՈՐ

Այո՛ դշխոյ գերաշուք:

ԿԱԼԻՓՈՒՆ

Եւ զի՞նչ պատճառ ուղեկցութեանդ աստանօր:

ՄԵՆՏՈՐ

Ձի Ողիսևս իմս բարեկամ մտերիմ
Յորժամ կամէրն մեկնիլ գնալ յիթակեայ՝
Յանձն ինձ արար ըզՏելեմար նորածին.

Եւ թախանձեաց և ասաց

Խնամ կալ դու հայրաբար

Չորդւոյ իմմէ դեռատի.

Եւ առաջնորդ նրմա լեր

Յամենայն դէպս կենաց իւր: —

Յորժամ եհաս ի յարբունս՝

Որդին նորին Տելեմար.

Ըղձակաթ յոյժ եղև նա

Ձիւրն գտանել ըզճէք ըզՀայրն կորուսեալ.

Եւ նա յինէն արտասուաթոր թախանձ արկ

Ինքեան լինել ուղէկից.

Եւ առաջնորդ ի դժուարինս.

Յանձն ես առի կամակար.

Անցար՝դ ցամար, անցար ընդ ծով բազմածուփ,

Եւ մերձ ի սոյն յայտ կղզիս

Նաւ մեր բեկաւ ի մրրկաց.

Եւ մեք անկար ի ցամար.

Եւ դու եղեր ասպնջական մեզ հիքացս:

ԿԱԼԻՓՈՒՆ

Ո՛հ սիրալի է անցքս յայտ

Եւ կարեկից ընդ ձեր աղէտս յոյժ դառնագինս ես
լինիմ

ՄԵՆՏՈՐ

Ձի սիրտ ի քեզ բարեգորով գոյ, դշխոյ.

ԿԱԼԻՓՈՒՆ

Որչափ հնար է, և կար գոյ յիս սիրով գթով
անկեղծիկ

Ձձեզ արարից գերկոսեանսդ երջանիկ

Միայն թէ մնասջիբ ի կղզւոջս,

Այլ Գու, Մենտոր, թոյլ տուր այժմ՝

Ձի Պատանեակս վշտակիր՝

Ընդ իս այժմիկ վայրիկ մի

Ի ճեմ գայցէ ի զբօսանս:

ՄԵՆՏՈՐ

Ընդ հիւրասէր ընդ հովանեաւ քոյդ եմ այժմ՝

Եւ ընդ քոյով իշխանութեամբ վեհաշուք.

Արա որպէս քեզ հաճոյ:

ԿԱԼԻՓՈՒՆ

Եւ գոհ ես դու ընդ այդ պատիւ մեծաշուք

Եւ ընդ կատարումն խնդանացս:

Կալիփոսէ բերկրեցաւ յոյժ ընդ այն թոյլտութիւն, և կա-
լեալ զձեռանէ Տելեմարայ, մեղմիկս ճեմ ստեալ, շրջեր ի
բուրաստանի իւրում: —

ԿԱԼԻՓՈՒՆ

Տես, Տելեմար,

Քանի՛ չքնաղ և բերկրարար է բուրաստանս ձեռա-
կերտ,

Քանի՛ ազնիւ և երփնագեղ զոն ծաղկունք,
 Որ հոռոս անոյշս բուրեն աստ.
 Եւ քանի՛օն ծառք բազմազանք գեղաշուք,
 Որ քաղցրախորժ պտուղըս տան ի վայելս.
 Եւ քանի իսկ գետք և վտակք և աղբերք,
 Որոց ջուրք են զովարար յոյժ և համեղք..
 Եւ որչափ հաւք թռչունք բազումք փետրազարդք,
 Որք ճռուողեն և քաղցր նուազըս յօրինեն,
 Մի՛թէ չեն քեզ ցանկալի,
 Եւ քոյդ վշտաց ըսփոփանք,
 Յայտմ՛ մեր մընալ ի կղզւոջ. (րար.
 Եւ զուգակցել ընդ իս սիրով ամուսնական բերկրաւ,
 Եւ կեալ ընդ իս անմահարար երանաւէտ և անվերք:

ՏԵԼԵՄԱՔ

Արդար և իսկ յիրաւի,

Ո զիցուհիդ գերափառ,
 Գերազուարճ է բուրաստանս և գեղեցիկ և շքեղ.
 Եւ յիս քաղցրիկ բերկրանս ազդէ և հրճուանս,
 Եւ ըսփոփէ ըզվշտակիր ըզսիրտ իմ.
 Այլ մոռանալ ըզհայր և զմայր կաթոգին.
 Եւ զհայրենի բնագաւառ ցանկալի,
 Է մոռանալ զվերին զիս
 Ձի զից վերնոց են վեհ հրամանք սրբազանք՝
 Սիրել ըզհայր սիրել ըզմայր,
 Եւ զհայրենիս, որչափ թշուառ.
 Եւ անմոռաց մընալ յաւէժ:
 Որ զայս պատուէր ապախտ առնէ,
 Եւ ըզպարտոս իւր ոչ կատարէ.

Ձի նա բընաւ չէ արժանի
 Անուան մարդոյ բանականի: —

ԿԱԼԻՓՍԷ

Է՛՛ ՏԵԼԵՄԱՔ ՏԵԼԵՄԱՔ,

Ազնիւ որդիդ խորագիտին Ողիտեայ,
 Ազդու են բանքդ, որ ի քոյոյ
 Այժմօ ելանեն ի բերանոյ,
 Ի վեր են քան ըզքոյդ հասակ.
 Գուցէ ի սիրտ քո է ազդեալ
 Ծերբունիս այս պատկառելի և զգօն.
 Այլ լուր դու ինձ, ո՛ ՏԵԼԵՄԱՔ,
 Ձի լաւ է քեզ մընալ աստ միշտ՝
 Յերանաւէտ յայտմ՛ կղզւոջ,
 Եւ յիմ՝ քաղցրիկ վայելել սէր.
 Քան թէ զընալ ի Հայրենիդ,
 Որ է թշուառ և աղքատիկ:
 Հայր քո զոր դուդ ինդրես անձկաւ
 Ընդ ծով ցամաք թափառելով,
 Ձէ կենդանի, այլ ծովասոյգ.
 Ձի նա եկն աստ նաւաբեկեալ,
 Մընաս ընդ իս ընդ ամս երկարս.
 Եւ ես ըզնա սիրէի յոյժ.
 Եւ խոստացաւ մընալ ընդ իս
 Եւ յիմ ի սուրբ վայելել սէր.
 Այլ նա ծածուկ ել ի կղզւոյս,
 Եւ փոթորկաց հանդիպելով
 Եղև անդէն նա ծովասոյգ: —
 Եւ մայր քոյին Պենելոպէ,

Ո՛ր գիտէ թէ կենդանի է.
 Լաւ է ուրեմն քեզ աստ մընալ,
 Յերանելեաց յայտմ մեր կղզւոջ,
 Որ անմահից է բնակարան,
 Եւ զուարճութեանց իսկ կայարան:

ՏԵԼԵՄԱՔ

Աւաղ եղևկ

Սյուպէս ուրեմն կորեաւ հայր իմ՝
 Ըստ հրամանաց դիցըն վերնոց.
 Ողբամ ըզքեզ, հայր իմ ազնիւ,
 Ողբամ ըզքեզ, մայր իմ քաղցրիկ.
 Ձի ոչ դարձեալ ես վերստին
 Ձծնողս տեսից իմ կաթոզին.
 Յայտըմ հետէ դառն իսկ լիցին
 Աուրք կենացս չարաբաստիկ: —
 Ո՛հ -- գելանի սիրտ իմ ճմլի
 Ա՛հ -- թարշամի սիրտ իմ ցաւած
 Սիրտս մորմոքի սիրտս տոչորի, ինդայ դողայ և
 Ես ոչ կարեմ այլ ևս տոկալ, տանել ցաւոցս յոյժ
 դառնագին:

Ի սասակութենէ տրամութեանց և վշտաց՝ Տելեմաք ան-
 կանի ի գետին: — Կալիփսէ շիթի տրամի, և անգէն կոչէ
 զՅաւէրժհարսունն որ մերձն էին ի բուրաստանն այն. և
 նոքա վաղվաղակի հտտին անդ, և շուրջ պատելով զՏելեմա-
 քաւ՝ ետուն նմա ըմպել գնեկտար. զուարթանայ Տելեմաք,
 կազդուրին անդամը նորա. երեկոյ լինելով յայնժամ, Տե-
 լեմաք մտանէ ի բարայր ի խորին քուն. և Աթենաս որ ի
 կերպարանս Մենտորի շրջէրն՝ երեի Տելեմաքայ:

ՏԵՍԻԼ ԶՈՐՐՈՐԴ

ՏԵԼԵՄԱՔ

Է՛հ որպիսի տեսարան

Եւ սքանչելի կերպարան.
 Գեղ և շնորհ գերազանց.
 Ճաճանչ փառացդ անման,
 Եւ լոյսդ չքնաղ երկնային,
 Յապուշ կրթեն զիմքս միտս,
 Եւ զբրաւեն զիմ իսկ սիրտ,
 Ո՛ր դու իցես աղէ, օ՛ն:
 Քեզ աղերսեմ յայտնեա՛ ինձ,
 Եւ զթոյդ անուն ցանկալի:

ԱԹԵՆԱՍ

Անուն իմ է Աթենաս.

ՏԵԼԵՄԱՔ

Ո՛վ սքանչելեացս.

Դու Աթենաս մեծափառ
 Ատուածուհիդ իմաստութեան և շնորհաց.
 Որ ի կատար բարձր լերին Ուլիմպեայ
 Բնակաւոր, այլ այժմ իլջեալ անդոտին
 Ինձ երեւիս տրամեցելոյս և հիքոյս,
 Ինձ ի սփոփանս և ի խրախոյս և ի յոյս.
 Եւ լոյսդ սփոռես ճաճանչափայլ գերթ արփի.
 Չեմ ես արժան այդմ լուտոյ,

Եւ ոչ կարեմ ժոյժ ունել
Ականողիք իմ խողին.
Զի երկրածին եմ էս մարդ
Եւ անտովոր այդմ լուսոյ
Եւ գերահրաշ այդմ տեսեան: —

Տելեմաք՝ ծնրադրեալ պշուցեալ հայեր ընդ Աթենաս,
որ զերթ արփի ճանճաչամէտ արտափայլէր. այլ ոչ իշխէր
յառաջ մատչիլ առ նա: —

ԱԹԵՆԱՍ

Մի՛ դու մի՛ բնաւ երկնչիր
Ազնիւ որդիդ Ողիսեայ,
Յառաջ մատիր աներկիւզս.
Ի քեզ գթամ, ի պատանիդ Հայրասէր,
Հայր քո Ողես, հայրենասէր և արի.
Որոյ հնարիքն, ճարտարութեամբն և խրատու
կործանեցաւ յաճիւն դարձաւ Տրովադա:
Կենդանի է, և մերձ ի կղզիս բընակի.
Քեզ նա սպասէ, զի զքեզ հոգուով տեսանէ.
Զքեզ գերծուցեալ Մենտոր զգօնն բազմահնար
Եւ ի սոյն այս տարցէ կղզւոյս վառչուէր,
Եւ անվտանգ ըզքեզ ածցէ ի վայրն այն,
Ուր Հայրն քո, զոր դու խնդրես անձկանօք.
Եւ ընդ նըմին գնասցես անփորց անվկանդ՝
Ի բնին գաւառն համբաւատենչ Իթակէ:
Եւ մայր քոյին՝ Պենելոպէ կաթողին,
Որ տակաւին կենդանի է և բաղճայ
Նա անձկանօք զքեզ տեսանել վաղ ընդ փոյթ

Նա գրգաբաց ըզքեզ սիրով ընկալցի.
Եւ յորդ արտօսր յաչաց հեղցէ խնդութեան:
Զի դու ընդ ծով և ընդ ցամաք շրջելով,
Զհայրն քո, զվեհն Ողիսես դու գտեր,
Առ ինքն ածեր, որում մնայրն կարօտով.
Եւ հայրն քո, խորագէտ յոյժ և արի,
Որ բազմադէմ տարաւն վշտաց և ցաւոց,
Եւ նեղութեանց, տառատանաց սոսկալեաց.
Դարձեալ ի բնիկ ի գաւառին Իթակէ
Թագ կապեցէ, և իշխեցէ Ազգին իւր.
Եւ խնամ նոցա տարցէ սիրով և փութով,
Եւ Ազգ նորին գնա սիրեցեն սրտագին:
Եւ նորին արժանաւոր լաւ որդի,
Վայելչաբար յետ նորա անդ յԻթակէ
Թագ կապեցես, և ի նորին նստցես գահ.
Այլ պարտ է քեզ, ո՛ր Տելեմաք, ազնուազարմ՝
Ըստ հօրն քո, կեանս վառել անտխեղծս.
Զժողովուրդս քո դատելով ուղղութեամբ
Եւ խնամելով զամենեսին զթութեամբ.
Զայսօտիկ զիք քոյդ Հայրենեաց պահանջեն
Եւ զպատգամս քեզ ընծայեն սրբազանս:

ՏԵԼԵՄՄՔ

Մեծ են քոյդ շնորհք, Աստուածունիդ Աթենաս,
Եւ մեծագոյն շնորհակալեաց արժանի.
Եւ ես ըստ քոյդ վեհ պատգամացդ գնացից:

ԱԹԵՆԱՍ

Զոր ինչ ես այժմ՝ քեզ յայտնեցի առանձինն,
Մի՛ դու ումեք մի՛ բընաւին յայտնեսցես.
Եւ մի՛ ևս սոյն այս դշխոյիս կալիփսեայ:

ՏԵԼԵՄԱՔ

Ձոր ինչ պատգամս և պատուէրս
 Դու ինձ ետուր օգտակարս,
 Չայնս ճշգրտիւ պահեցից,
 Ես գրեզ հոգւովս սիրեցից.
 Եւ գրեզ յաւէժ պաշտեցից:
 Եւ ոչ բընաւ մոռացայց
 Զսուրբ պատգամս Աստուածեան:

ԱԹԵՆԱՍ

Ձքեզ օրհնեմ, ո՞ Տելեմաք սիրելի,
 Եւ յիմ ի շնորհացս երկնային՝
 Ի քեզ հեղում յորդառատ: —

ՏԵԼԵՄԱՔ

Քեզ վայելեն փառք և պատիւ արժանի,
 Եւ շնորհապարտ զոհուծիւն:

*Վերացաւ Աթենաս յերկինս, և մնաց Տելեմաք միայնակ
 ի սենեկի իւրում. և զարծակ անկաւ ի քուն խորին և խա-
 դաղաւէտ:*

ՏԵՍԻԼ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Ընդ այզն Կալիփոէ գարթուցեալ ի ջնոյ, անդէն վաղվա-
 դակի առաքէ զմի ի Յաւերժհարսանց առ Տելեմաք, և հրա-
 չիբէ զնա ի յառանձին սենեակ իւր, և խօսակից ընդ նմա
 լինի այսպէս:

ՏԵԼԵՄԱՔ

Լոյս բարի քեզ դշխոյ վեհ՝

ԿԱԼԻՓՍԷ

Նոյնպէս և Քեզ, Տելեմաք.

ՏԵԼԵՄԱՔ

Մեծ են շնորհքս, Տիկին մեծ.

ԿԱԼԻՓՍԷ

Յաւէտ զուարթ, յաւէտ խաղաղ դու երևիս. Տելեմաք
 Ի գիշերի անցելում.

Գուցէ քաղցր նինջ քեզ պարգևեաց Մորփէոս,
 Եւ ես նա քեզ ըզքոյզ ըզվիշտս մոռանալ.

Եւ ըզթախիծս քոյոց մտաց փարատեաց
 Եւ ի սիրտ քո Աստղիկն ազդեաց մընալ աստ,
 Ուր զոն բերկրանք, խաղբ և խնծղանք և հրճուանք.

Եւ յիմ ի սուրբ սէր վայելել կաթոգին.
 Եւ աստ յաւէժ կեալ երջանիկ և անմեռ.

Մի թէ չեմ ես, աստ դու ինձ, գեղանի,
 Քան զդստերս քոյոյ երկրին աղքատին.

Մի՞թէ հարսունք յաւերժակեաց, և սիրուն
 Չեն առաւել գեղազուարթ, և ազնիւ

Քան զկանայս քոյզ գաւառին անշուք յոյժ.

ՏԵԼԵՄԱՔ

Գեղանի գեր քան զդստերս իմս երկրի.
 Ես դու դշխոյ մեծարոյ,
 Եւ կոզիս այս առաւել է բերկարար՝

Քան ըզմերնն ի թակէ՛.
Այլ սուրբ պատգամ՝ վերնային,
Եւ սէր իմոյ հայրենեաց:
Եւ սէր իմոց ծնողաց.
Առաւել են զօրաւորք
Եւ զիս սաստիկս ձգեն անդ
Անյաղթելի զօրութեամբ:

ԿԱԼԻՓՍԷ

Ո՛ մոլորեալ պատանի,
Մոռանալ դու զիս կամիս.
Եւ կաթոգին ըզսէր իմ:
Զգութ գորով և զինամս.
Ըղծաս դառնալ յի թակէ,
Ուր ոչ քո Հայր և ոչ քո մայր կան այժմիկ.
Եւ զի թակէ թշուառագոյն և անշուք
Կերադասիս քան զմեր կողի գերագուարձ.
Ի բաց ուրեմն գնա Տելեմաք յերեսացս.
Ի բաց ի բաց դու անդարձ.
Դու ապերախտ նըման հօրդ Ողիսեայ.
Նա յամառեաց, և զիս խաբեաց, և նենգեաց,
Եւ զաղտ յինէն նա գնաց.
Այլ Պոսիդոն՝ Տէրն ծովուց համօրէն,
Յարոյց մրրիկս և փոթորիկս ահեղս յոյժ.
Եւ խորտակեաց ըզնաւ նորին ի ծովու,
Եւ զհայրըն քո՛ ի յալիս անդ նա թաղեաց.
Զքեզ այնպէս Պոսիդոն
Արդարադատն Պոսիթոն
Յալիս ծովու թաղեսցէ.

Եւ անէ Տելեմաք ի սենեկէ, և կալիփսէ տերեալ ընդ
անցս այս, յուզեալ նստի ի սենեկի իւրում, և ապա կոչէ
զմի՛ ի Յուէրժհարսանց զնալ առ Մենտոր, և բերել զնա
ընդ ինքեան ի սենեակն իւր:

ԿԱԼԻՓՍԷ

Ո Մենտոր,

Պատանիդ այդ Տելեմաք,
Մոլորեալ է և զեղծեալ,
Եւ մոռանալ կամի զիս.
Եւ զիմ ըզսէր կաթոգին.
Եւ ըզինամս զինքենէ
Զիս լըքանել կամի նա.
Եւ յիւրն դառնալ յի թակէ.
Որպէս Հայր իւր Ողիսես
Գժրեաց զուխտ իւր և զընաց.
Եւ նաւ նորին մըրրկաց
Հանդիպելով ահեղաց.
Խորտակեցաւ ի ծովու.
Եւ ի յալիս թաղեցաւ:
Նմանրացատումն եմ ես յոյժ:
Ընդ պատանիդ ապառու՛մ.
Զփափազիմ՝ վերստին
Զնա տեսանել բընաւին.
Կնա՛ այժմիկ դու Մենտոր,
Ի մերն անտառ մերձակայ,
Դու անդ գացես ըզգործի՛ս՝
Ի կազմութիւն իմն նաւու.
Կազմեա քեզ նաւ սրընթաց.

Ան զՏելեմար տար ի նաւն,
 Էւ հեռացո՞ ի կղզւոյս.
 Էւ Պոսիդոն տէրն ծովու՝
 Մրրիկս սաստիկս յարուսցէ,
 Զալիս անեղս կուտեսցէ
 Էւ ըզնաւն նորա սուզեսցէ.
 Այսպէս վրէժ նա առցէ
 Յապաշնորհ պատանոյն:

Եւ Մենտոր ի սենեկէ անտի. ուր կայրն Կալիփոսէ և անդէն
 վաղվաղակի զնաց յանտաւն, գոր Կալիփոսէ եցոյցն նմա,
 և սկսաւ կատուցանել զնաւն ի չու:

ԿԱԼԻՓՍԷ

Է՛հ — զինչ արարի,
 Զի՛նչ գործեցի, ես ինձէն
 Անմտացայ յիրաւի.
 Էւ զգաղտնիս յայտնեցի.
 Էւ զգործիս այնմ ցուցի,
 Որ խորնագէտն է կարի.
 Փուլթով զնաւ կազմեսցէ,
 Էւ զՏելեմար առցէ նա
 Էւ ի կղզւոյս վաղ ելցէ,
 Էւ զինչ ապա լիցի ինձ.
 Էւ ի սխոփանս ես գտից
 Էւ զհարզ ուրախ ես կեցից:

Մինչ Կալիփոսէ դեռ կայր ի սուզ սաստիկահին. և ի յուզ-
 մունս մտացս երեկեցաւ նմա սէրն մանկիկ, և կազդուրեաց
 զԿալիփոսէ. և ազդեաց ի միտս նորա, ճարակ տալ հրոյ

զնաւն նորակառոյց: Անդէն իսկ Կալիփոսէ կոչեաց զՅաւէրթ
 հարսունս, և պատուիրեաց նոցա զնալ ճեպել և այրել
 զնաւն զայն: Գնացին նորա և ջաշս վառեալ, այրեցին ըզ-
 նաւն:

Մենչդեռ Մենտոր հեռի էր ի նաւն, զուարճացաւ Կալիփո-
 սէ ընդ զէպն այն, և ընդ նմին Յաւէրթհարսունքն, և ան-
 տի մեկնեցան նորա, և զնացին առ Կալիփոսէ: Այլ յայն-
 ժամ յանկարծուստ իմն երեկեցաւ նաւ մի փիւնիկեցի՝ սա-
 կաւ ինչ հեռի ի կղզւոյն: Էւ Մենտոր, որ էրն Աստուա-
 ծուհի իմաստութեան, ի կերպարանս մարդոյ երեկալ, և զի-
 տէր զամենայն հնարս, անդէն էան զՏելեմար ի զերկո
 իւր, և լողալով անց զնաց և եհաս ի նաւն այն: Նաւա-
 պետն մտադիրս ընկալաւ զնոսա. և առագաստս պարզելով
 մեկնեցաւ զնաց ի կղզւոյ անտի Յաւէրթհարսունքն տեսին
 զչու նաւուն. և անդէն ազգ արարին Կալիփոսեայ: —

ՊԱՐԲ ՅԱՒԷՐԹՀԱՐՍՍԱՆԾ.

ՄԻ ՆՈՅՏԱՆԷ ԵՒ ՔԱՐԻՍՆՈՍԷ

Ո՛ր զիցուհիդ չարաբաստ.
 Իեռ պատանին Տելեմար.
 Ապաշնորհն Տելեմար.
 Մտաւ ի նաւն ի փիւնիկ,
 Որ մերձն կայր մեր կղզւոյս.
 Գնաց աստի նա անդարձ
 Էւ ընդ նըմին Մենտորն այն:

ԿԱԼԻՓՍԷ

Ո՛հ — անաղ — ե՛ղուկ
 Գընաց ուրեմն Տելեմար.
 Որդին վատին Ոգիտեայ.

Գնաց ապաշնորհ պատանին
Որում յաւէտ սիրէի.
Եւ զիս ի սուգ և ի վիշտ
Եթող յաւէժ անսփոփ:
Դառն է վիճակս և տըխուր,
Եւ դառնագոյն ևս լիցի.
Զի տարփալին իմ գընաց.
Եւ հեռացաւ նա անդարձ.
Սիրտ իմ սաստիկս գելանի.
Սիրտ իմ սաստիկս տոշորի,
Եւ ակունք իմ մթագնին..
Այլ ևս չկարեմ ունիլ ժոյժ
Ոտք իմ ուժգին դողդողին.
Անձն իմ սաստիկ երերին.
Ոհ անկանիմ անկանիմ
Զիս կալարուք գթալով.
Յաւերժհարսունք բարեսիրաք:

Դողալով անկաւ կալիսէ. կալան գնա Յաւերժհար-
սունքն, այլ դարձեալ անկաւ և թալկացաւ, և Յաւերժհար-
սունք սուգ առեալ ողբացին և արտօսը հեղուն:

Վ Ե Ր Ձ



Հայաստանի Ազգային գրադարան



NL0431402

29707